

Ա. Բ Շ Ա. Վ.
Ա.Ա.Պ.Հ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Պրաֆեսոր Ե. Ի. Ա.Գ.Ա.ՊՈՎ,

ՊԱՀՊԱՆԻՐ ԱՏԱՄԴ

616.314
Ա - 17

3

1934

Ա Զ Ո Վ - Ս Ե Վ Ծ Ո Վ Ց Ա Ն
ԵՐԿՐՈՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ



30 JUL 2010

Ա. Բ. Շ. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.

36299

616.314 տակուարքամբ
6F-17 190.276

Դ 7.6667 8/118070

36314

Ա-17

ար.

Առ 8
36299

Պրօֆեսոր Ա. Ի. Արթորով,

ՊԱՐՊԱՆԻՔ ԱՏԱՄԴ

Թարգմ. Հ. Պողոսյանի



ԱԶԱԴ-ԱՆՎՈՒՎՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՑԱՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԹՈՎՍՈՎ-ԴՅՈՒ-1934

- .01. 2013

0716

ԻՆՉՈՒ ՄԱՐԴԻԿ ԶԵՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԻՐԵՆՑ ԱՏԱՄՆԵՐԸ

Սոցիալիզմի կառուցումն ավարտելու և յերկրի պաշտպանությունն ամբացնելու համար ԽՍՀՄ-ը կարիք ունի կուլտուրական, վորակյալ և առողջ բանվորների, կողմնականների և աշխատավորների:

Կուլտուրական և գորակյալ մարդ լինելու համար հարկավոր ե սովորել, իսկ առողջ լինելու համար անհրաժեշտ ե առողջությունը պահպանել և լավ իմանալ իր որդանների կատարած աշխատանքն ու նրանց նշանակությունը:

Մարդկային որդանիզմի յուրաքանչյուր գործող որդան մարդու առողջության համար շատ կարևոր ե և պետքական:

Մարդու առողջությունը կարող ե ապահով լինել, յեթե նրա բոլոր գործարանները համատեղ ու կանոնավոր աշխատանք են տանում:

Օտ. ред. Г. А. Потени
Сдан набор 2/IV-1934 г.
Издан. 218/3796
Статформат А6 105x148
Уполномочен № Б-363

Тех. ред. О. Тер-Давыдов
Подписано в печ. 17/IV 1934г.
Об'ем 1½ печ. листа.
Заказ 1803
Тираж 1000 экз.

Типография им. „Стачки 1902 года“ АЧПТ в г. Ростове на Дону

Սակայն աշխատավորները սովորաբար միատեսակ չեն գնահատում ու պահպանում իրենց մարմի գործարանները: Լեզվից զըկը-վելիս, մարդ յերկար ժամանակ մնում է սրտամաշուք և անմիտիթար վիջակի մեջ, վորովինետե նա կորցրել է խոսելու ընդունակությունը: Աչքից զըկվելիս, նա յերկար ժամանակ վողբում է իր դառն վիճակը, վորովինետե պիտի անցնի շատ ժամանակ, մինչև նա կոսվորի մեկ աշքով ել լավ տեսնել:

Յերբ խանում ե մարդուս մեկ ականջը, նրա վիշտն այնքան ել շատ չի տևում, վորովինետե նա շատ շուտ ընտելանում է մեկ ականջով ել լսելու:

Իսկ յերբ մարդ կորցնում է իր ատամը, մանավանդ այն ատամը, վորը չի յերեռու, նա շատ քիչ ե ցափում պյու մասին, վորով հետեւ բերնում զեռ մնում են շատ ատամներ, վորոնք հեշտությամբ կարող են կերածը ծամել. հետեւաբար այդ կորստից նա վոչ մի զրկանք չի կրում: Բացի զբանից, կորցրած ատամի փոխարեն նա կարող է արհեստական ատամ գնել, վորը բավականաշափ լավ կկատարի կորցրած ատամի դերը:

Աշխատավորը միատեսակ չի գնահատում իր գործարանները և դրա համար ել

միատեսակ խնամքով չի պահպանում նրանց: Հենց վոր աշքը ցավի, նա խսկույն վագում և բժշկի մոտ՝ իր ցավին դարման գտնելու: Իսկ յերբ ատամն ե ցափում, նա այդ բանին բոլորվին ուշագրություն չի դարձնում, մինչև վոր չակսվեն այն սոսկալի ցավերը, վորոնք հնարավորություն չեն տալիս նրան վոչ աշխատելու, վոչ ուտելու, վոչ խմելու և վոչ ել քնելու: Ահա այդ ժամանակ միայն նա զիմում է բժշկի ոգնությանը և հաճախ, առանց յերկար մտածելու, համաձայնվում ե ատամը հանելու:

Այսպիսի անհոգ վերաբեմունքը դեպի ատամները պարզապես հետեւանք ե այն բանին, վոր աշխատավորները, մինչև վերջին ժամանակները անտեղյակ եյին այն կարեռը նշանակությանը, վոր ունեն ատամները մարդու առողջության համար:

Բժիշկները գիտեյին և ասում եյին, վոր ատամները հարկավոր են կերածը ծամելու համար, վորպեսզի այս վերջինը թքի հետ լավ խառնվի և հեշտությամբ ու կերակրափողի համար միանգամայն անվաս կերպով անցնի դեպի ստամոքսը և ատամավերը աշխատաված լինի ատամներով, այն-

քան ավելի առատ թուք և պարունակում էր մեջ, հետեաբար և ավելի հաշտությամբ ե մարսվում ստամոքսի և աղիքների հյութերով։ Այսպես լավ մարսված մնագից որդանիքն ստանում ե մեծագույն չափով ոգտակար նյութեր և սակավ նյութեր և դուրս հանում կղկղանքի հետ։

Բայց զրա հետ միասին կյանքը մեղցույց ե տալիս, վոր մարդ մի վորեն գործարանից զրկվելու դեպքում ել կարողանում է լավ հարմարվել կյանքին։ Մենք բոլորս ել գիտենք, վոր մարդս ատամնիրից զըրկվելով չի մտնանում, նույնիսկ չի ել նիհարում, այլ շարունակում ե ապրել և յերեմն ել շատ յերկար։ Այդ նրան հաջողվում ե այն դեպքում, յերբ նա փոխում ե իր սնունդը, այսինքն՝ այնպիսի կերակուրներ ե պատրաստում, վորսնք առանց ծամելու յել են ուտվում։ Կենցաղային սովորական պայմաններում այդ անելը դժվար չե, և կերակրի այդպիսի փոփոխությունը վաչ առանձին զրկանք, վաչ անհարմարություն, և վաչ ել վորեն անախորժություն ե պատճառում մարդուն։ Դա յե պատճառը, վոր շատերը, ինչպես հարկավորն ե, չեն գնահատում իրենց ատամները և չեն պահպանում նրանց։

Կան մարդիկ, վորոնք ատամներից զըկվելիս, ցավում են միայն նրա համար, վոր իրենց դեմքը վորոշ չափով տղեղանում ե, և բոլորովին անհանդիստ չեն լինում, վոր զրանով իրենց մարսողությունն ե խանգարվում։ Իսկ ինչ վերաբերվում է անատամ բերանի գեղցկացմանը, մարդիկ սովոր են գործածել արհեստական, գնովի ատամներ, վորոնք լերբեմն ավելի գեղեցիկ են, քան թե բնական ատամները, բայց իհարկե յերբեք լիովին չեն կարող փոխարինել նրանց։

Իսկ այն աշխատավորը, վորն, ատամներից զըկվելուց հետո, անկարող կլինի փոխել իր սնունդը, մշտապես տանձվում ե ստամոքսի և աղիքների հիվանդությունից, վորն իր հերթին շատ անդամ առաջացնում է ուժեղ սակավարյունություն և որդանիզմի հյուծում։

ՓՅԱՑՎԱՌ ԱՏՎՄՆԵՐԸ ՇԱՏ ՎՏԱՆԴԱՎՈՐ ԵՆ ԱՌՈՂԶՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Նախքան բոլոր ատամներից զըկվելը, աշխատավորն ապրում է հիվանդ, քայքայված ատամներով։

Բժիշկները միլիոնավոր մարդիկ հետազոտելուց հետո, յեկել են այն յեզրակացության,

վոր նույնիսկ յերկու տարեկան յերեխաների առամեներն ել արդեն հիվանդանում են, ու քանի յերեխան մեծանում ե, այնքան ել նրա հիվանդ առամեների թիվն ավելանում ե: Գալով հասակավորներին, հազիվ թե զանգի մի մարդ, վորի առամեներն առողջ լինելին ու չքայլայված:

Այժմ արդեն լավ հայտնի յե, վոր աշխատավորի առողջության համար քայլայված առամեներն ավելի վասնգավոր են, քան առամեների բացակայությունը: Այս յերեվույթն ապացուցված ե միայն վերջին քսան տարիներում, շնորհիվ բժիշկների և գիտնականների աշխատանքներին:

Ամերիկացի գիտնական Հյունտերը, տառը տարի շարունակ ուսումնասիրելով մարդկանց ու կախարյունությունն առաջացող պատճառները, հանգել ե այն յեզրակացության, վոր զանազան վասարեր միկրոբներ քայլայված առամեների միջով արյան մեջ են թա՞ւնցում, արտաթորում են այնտեղ իրենց թույնը և սակավարյունություն են առաջ բերում:

Վերահասու լինելով այս բանին, բժիշկներն սկսեցին ուշի ուշով և մանրաժամանորեն ուսումնասիրել, թե ինչ միկրոբներ են գտնը-

վում մարդու բերանում, ինչպես են նրանք այստեղից թափանցում արյան մեջ և ինչ հիվանդություններ են առաջացնում: Այս կարևոր հարցերը յերկար տարիներ ուսումնասիրում են բոլոր յերկրներում և մինչեւ որս ել գիտնականները շարունակում են իրենց հետազոտումները, վորպեսզի ճշտեն քայլայված առամեների ունեցած ազդեցությունն առողջության վրա:

Գիտնականներն ապացուցեցին, վոր առողջ բերանում, քանի գեռ բոլոր առամեներն ել առողջ են, պատահում են միայն այն պիսի միկրոբներ, վորոնք վոչ մի վաս չեն տալիս մեր առողջությանը: Յերբեմն, այն, լինում են նաև վնասակար միկրոբներ, բայց դրանք պատահական են և սակավաթիվ: Մինչդեռ յերբեք չմաքրվող բերանում հաճախ լինում են այնպիսի միկրոբներ, վորոնք վասում են առամեներին, և սրանք սկսում են հիվանդանալ: Իսկ յերբ բերանում արդեն կան հիվանդ առամեր, դրանով ստեղծվում են լավագույն պայմաններ միկրոնավոր արդարագին վաս են պատճառում աշխատավորների համար, վորոնք այլ տեսակի միկրոբների համար, վոր այլ տեսակի միկրոբների համար, վորոնք ահազին վաս են պատճառում աշխատավորների ընդհանուր առողջությանը:

Ահա այս միկրոբներն են, վոր մտնելով

հիվանդ ատամների մեջ, ել ավելի քայքայում են նրանց, իրենց բույնն են հաստատում այստեղ և շատ արագ զարգանում են: Այստեղից նրանք ավելի խորն են թափանցում որդանիզմը և անցնում են արյան մեջ: Այստեղ նրանց մեծ մասը վոչնչանում ե, իսկ կենդանի մնացողներն արյան հետ տարվում են գեպի բոլոր գործարանները, այսինքն՝ սիրու, յերիկամունքները, մկանները, հոդերը և առհասարակ մարմնի բոլոր մյուս գործարանները:

Թեև միկրոբներն արյան հետ մղվում են մյուս բոլոր գործարանները, բայց ամեն տեղ յերկար չեն մնում: Նրանք միշտ ընտրում են իրենց համար ամենահարմար տեղերը, Միկրոբների մի մասն իրեն համար բնակուվայր ե գարձնում մարդու աչքը, մյուս մասը՝ ականջը, յերրորդը՝ նյարդերը, չորրորդը՝ սիրու և այլն:

Բուն գնելով մարդու զանազան գործարաններում, միկրոբներն ամրացնում են այստեղ իրենց գլխքերը, գնում են գործարանների նորանոր մասերը և սկսում են կընվել որդանիզմի հետ:

Նրանցից շատերն այս կովում վոչնչանում են, և վորապեսզի իրենց գրաված տե-

ղերը կարողանան պահպանել, նրանք մշտապես պետք ունեն նորանոր ոգնության:

Այդ ոգնությունը նրանց համառ ե քայքայված ատամներից՝ կամ միկրոբների նոր բանակների ձևով, կամ նրանց արտաթորած թույների ձևով:

Գործարանը թունավորվում ե նախ այն թույներով, վորը նրանք արտադրում են իրենց կենդանության ժամանակ, և այն թույներով, վորոնք գոյանում են նրանց վոչնչանալու հետևանքով:

Վարակված և թունավորված գործարանն սկսում ե հիվանդանալ: Հիվանդությունն սկսվում ե աստիճանաբար, կամց-կամց շատ աննկատելի և անզգալի կերպով: Նա, ինչպես ասում են, գոզի նման ե մոտենում: Իսկ այնուհետև արդեն սկսում ե ավելի և ավելի ուժեղանալ:

Այսպես կարող ե զարդանալ հոդերի հիվանդությունը, վոր կոչվում ե հոդերի ուժմատիզմ. այսպես և սկսվում մկանների հիվանդությունը, վոր կոչվում ե մկանների ուժմատիզմ. այսպես և սկսվում յերբեմն նաև նյարդափողի հիվանդությունը, վորը հայտնի յե նեվրիտ անունով. այսպես են զարդանում նաև յերիկամունքի, որտեղ մկանների,

սրտի փականների, լեղափամփշտի, արյունատար անոթների, աչքի և այլ գործարանների, ինչպես նաև մեր որդանիզմի ամբողջ մի հատվածի այս կամ այն հիվանդությունները:

Յեթե բերանն առողջացնենք, ապա այս կամ այն գործարանում հաստատված միկրոբներն ոգնություն չեն ստանա, և որդանիզմի հետ մղված կռվում շուտով վոչնչանալով, կղաղարեն թունավորել այն գործարանը, վորոնեղ իրենք հաստատված են: Այսուհետև այդ գործարանը չի հիվանդանա, իսկ թե վոր հիվանդանա յեւ, կառողջանա:

Հետևաբար, յերբ մենք առողջացնում ենք մեր բերանը, դրանով նենց ոգնում ենք որգանիզմին՝ պայքար մղելու այն վնասակար միկրոբների դեմ, վորոնի զանազան վանական հիվանդություններ են առաջացնում: Իսկ յեթե չառողջացնենք մեր բերանը և ժամանակին ոգնություն ցույց չըտանք որդանիզմին, ապա ուրեմն միկրոբները կհաղթեն, և գործարանի հիվանդությունը կսկսվի արագությամբ գարգանաբ:

Բերանն առողջացնելու համար պետք է առանձները մաքրել ամեն տեսակ կեղտերից, բժշկել այն առանձները, վորոնք դեռ կարող

են փրկվել, փշացած առանձները հանել և միաժամանակ բժշկել հիվանդ նշղերը: Բերանն այս կերպ առողջացնելուց հետո, շատ անգամ հիվանդ մարդը բոլորովին առողջանում ե:

Յերբեմն աշխատավորն ամիսներ շարուրունակ տառապում ե իր ցավերով, մեկ բժըշկից մյուսին և դիմում, դույլերով տեղ և խմում, ել դեղափոշի չի մնում, վոր չխմի, բայց վոչ մի արդյունք չի ստանում: Նա շարունակում է տանջվել, կորցնում է աշխատունակությունը և ծանր բեռ և դառնում իրեն շրջապատողների համար: Սակայն հենց վոր նա կարգի յերբում իր ատամները և առողջացնում ե բերանը, հիվանդությունն իսկույն անհետանում ե: Բժիշկներն արդեն այսպիսի շատ որինակներ են նկարագրում: Բերենք այդպիսի մի քանի որինակներ:

ԱՏԱՄԻ ՅԵՎ ՈՒՐԻՇ ԳԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻ ՄԻԶԵՎ ՅԵՂԱՄ ԿԱՊԵ

1881 թվին Գերմանացի բժիշկ Կեկկերը բժշկական ժուրնալում հաղորդեց մի հիվանդի մասին, վորի ականջի խլությունը

տարիներ շարունակ զարդանում և սաստկանում եր: Բերանն առողջացնելուց հետո այս հիվանդի խլությունն անցավ:

Չորս տարի անց խլության նույնպիսի բժշկության դեպքի մասին հաղորդեց մի ուրիշ բժիշկ՝ Ժելլեն:

1885 թվին Շվարցկոպֆ բժիշկը հաղորդեց բժշկական ժուրնալում, թե ինչպես նա բժշկել ե իր եպիլեպտիկ (ընկնափոր) յեղբոր հիվանդությունը: Նրա յեղբարը 27 տարեկան եր, յերբ առաջին անգամ ընկնալորության նոպա (որսուածօք) ունեցավ: Հիշյալ նոպան տեղի ունեցավ նրա վերի կըտրիչ ատամի խոռոչը լցնելուց (պլոմբ դնելուց) տասն որ անցած: Ատամը լցնելն անհաջող եր անցել, վորի հետեւվանքով ատամի յետեվի կողմը, քմքի վրա, ուռեցք գոյացավ: Մի քանի ժամանակից հետո հիվանդության նոպան նորից կրկնվեց, և հետագայում, յերկոտ տարի շարունակ այդ նոպաները կրկնվում եյին ավելի հաճախ: Ատամն առանձին ցավ չեր պատճառում հիվանդին, բայց քմքի ուռեցքը չեր անցնում: Կամենալով ազատել յեղբորը հիվանդ ատամից, բժիշկ Շվարցկոպֆը հանեց այդ ատամը: Դրանից հետո եպիլեպտիայի (ընկնափորու-

թյան) նոպաներն այլ ևս չեյին կրկնվում, թեև այդ որվանից չորս տարի յեր անցել:

Բժիշկ Լիբերը նույն ժուրնալում հոդված է գրել այն մասին, թե իր յերկոտ հիվանդների ընկնավորության նոպաները դադարել են այն որվանից, յերբ նրանց հիվանդ ատամները հանեցին:

1887 թվին Վիդմարկ բժիշկը նկարագրեց, թե ինչպես մի հիվանդ կին զրկվում է իր աչքի լույսից, կուրանում ե: Աչքը հետազոտելիս տեսնում են, վոր նա վոչ մի փոփոխություն չի կրել: Սակայն բերանում ծնոտի աջ կողմում, փչացած շատ ատամներ կային: Բժիշկ Վիդմարկը բաշեց-հանեց փչացած ատամները և տասն և մեկ որից հետո նրա աջ աչքը նորից սկսեց տեսնելք Այսպիսի դեպքեր նկարագրել են նաև Վիտտ և Ֆլորի բժիշկները:

1893 թվին բժշկական մի ժուրնալում լույս տեսավ Տիսինգ բժշկի հոգվածը: Այստեղ նա պատմում եր, վոր մի կին յնը կուտարի շարունակ կորցրել եր հոտառությունը: Հետո այդ կինն սկսեց դառը համ զգալ բերանում: Խեղճը յնը կար ժամանակ բժշկների մոտ, բայց բոլովին անոգուտ: Նա բժիշկ Տիսինգի մոտ

յեկավ ատամները բժշկելու համար։ Բժիշկը հանեց նրա փչացած ատամները, մյուս ատամներն ել հիմնովին մաքրեց քարերից։ Բերանի այսպիսի բուժումից հետո կնոջ հոտութելիքը վերականգնվեց, իսկ բերանի դառը համեն անհետացավ։

1898 թվին բժիշկ Դունինը բժշկական մի ժողովում հաղորդել է մի հիվանդի մասին, վորը չորս տարի շարունակ տանջվում եր միզրենից։ Յավերը բունել ելին զլիսի, վզի և ուսի ձախ կողմը։ Նա յերկար ժամանակ բժշկվում եր բազմաթիվ բժիշկներիմոտ, բայց բոլորովին ավարդյուն բժիշկ Դունինի մոտ յեկավ նա՝ հիվանդ ատամը բժշկելու (վերեկի ձախ կողմի իմաստության ատամը)։ Միզրենի նոպան արդեն անցել եր, յերբ նա յեկավ բժշկի մոտ։ Ատամները հետազոտելիս՝ բժիշկը տեսավ, վոր հիվանդ ատամի վրա փչակ կա։ Հենց վոր սկսեց այդ փչակը մաքրել, անմիջապես միզրենը բունեց։ Բայց յերբ այս ատամը հանվեց, միզրենն այլ ևս չկրկնվեց։

1901 թվին Հիպատ բժիշկը հետեյալ գեղքը հաղորդեց բժշկական ժողովում։ Մի հիվանդ դեմքի մկանների կծկում ուներ։ Նա շատ յերկար բժշկվում եր, բայց վոչ մի

արդյունքի չեր հասնում։ Այս հիվանդը միայն պատահաբար առողջացավ, յերբ սկսեց բժշկել հիվանդ ատամները։ Բժիշկը հանեց նրա հիվանդ ատամների արմատները, լցրեց այն ատամների փչակները, վորոնց զեռ կարելի յեր պահպանել, և մաքրեց նացած ատամների քարերը։ Բերանի այսպիսի բուժումից հետո դեմքի կծկումները դադարեցին։

Նույն թվին Գեսան բժիշկը հաղորդեց, թե ինչպես մի հիվանդ ազատվեց աջ ձեռքի կաթվածից։ Աջ ձնոտի փչացած սեղանատամը հանելուց հետո, յերեք շաբաթ անցած, հիվանդի աջ ձեռքը նորից սկսեց գործել։ Նույնպիսի զեպքի մասին հաղորդեց բան բժիշկ Հեմմելը։

1925 թվին բժիշկ Պեկերը ատամնաբուժների Մոսկվայում կայացած համառուսական համազումարում զեկուցեց մի տեխնիկի հոգերի ուժվածատիզմի բուժման մասին։ Հիվանդը 45 տարեկան եր և արդեն 10 տարի յեր, վոր ուժվածատիզմը նրան տանջում եր։

Վերջին տարիներում նրան սկսեցին տանձել կույր աղիքի բորբռքման ցավերը (օպո-պենդիցիտ), նույների խորհրդով նա փորկապ եր։ 

լողանալ, հեծանիվով ման գալ, նրան արգելել եյին պարապել սպորտի այն բոլոր տեսակներով, վորոնցով առաջները նա շատ եր տարված: 1925 թվի հունվար ամսին նա նորից բռնվեց ապենդիցիաի ցավերով, յեկ արդճն պետք ե ոպերացիա անեյին: Նհւյն ժամանակներում նրա վերին ծնոտի հիվանդ ժանիքի վրա յերևաց մի ուսեցք: Ատամնարուժը կտրեց ուսեցքը, ապա բժշկեց հիվանդ ատամը: Դրանից հետո թէ ուեվմատիզմի և թէ ապենդիցիաի ցավերն այլ ևս չկրկնվեցին: Հիվանդը մի կողմնեաց փորկապը, սկսեց առաջիւ նման լողանալ, ձի հեծնել և ընդհանրապես իրան լավ զգալ:

1930 թվին Ռոստովի կլինիկում մեզ պատահել ե այսպիսի դեպք: Մի հիվանդ կոլտնտեսուհի ընդունվում ե ներքին հիվանդությունների կլինիկան՝ իրրե բազմաթիվ հոգերի բորբոքում ունեցող հիվանդ: Այստեղից նրան փոխադրում են նյարդային հիվանդությունների կլինիկան, վորովիեակ ներքին հիվանդությունների բժիշկների կարծիքով, այդ հիվանդին յարդերն ե հարկավոր բուժել: Եյարդերի մասնագետը սրան յերկար ժամանակ բժշկելուց հետո ուղարկում ե ինձ մոտ: Թէս հետազոտեցի նրա բերանը

և տեսա, վոր սոսկալի վիճակի մեջ ե գըտնվում այս: Ատամներից շատերը փչացած եյին, իսկ մնացածներն ել բոլորովին կեղառոտ կարծրաշերտերով եյին ծածկված: Հիվանդը հոգերի ցավեցից անկարող եր ձեռքերը վերցնել, հազիվ ման եր գալիս, նիհարում եր և միաժամանակ ջերմում:

Սկսեցին նրան բժշկել և ատամները հանել: Հիվանդի վիճակը զնալով վատթարանում եր: Նա արգեն քայլել ել չեր կարողանում, ատամները բուժելու համար նրան պատգարակով եյին բերում բժշկի մոտ: Յերբ այդ կնոջ բերանը կարգի բերվեց, նրա առողջությունն ել սկսկեց հետզհետե լավանալ:

Շուտով այս կինը գուրս գրվեց կլինիկայից ու տուն վերադարձավ: Այս դեպքը պատահել եր գարնանը, իսկ աշնանը նույն կոլտնտեսուհին յեկավ ինձ մոտ ցույց տալու, թե վնասան լավ են գործում նրա ձեռքերն ու վոտքերը: Նա անյքան եր լցվել զերացել, վոր յես նրան չճանաչեցի: Նա ինձ պատմեց, վոր տան բոլոր աշխատանքները հիմա ինքն ե կատարում: Ապա մի քանի անգամ սանդուղքով վերուվար արեց, ձեռքերով մարմնամարդական շարժումներ

կատարեց՝ ցույց առաջ համար, թե վճրքան
ազատ կարողանում ե նա շարժել իր ձեռ-
քերն ու վոտքերը:

Նույն 1930 թվին Ռուսակի ներքին հի-
վանդությունների կլինիկան ընդունվեց մի
բանվորուհի: Նա չերգում եր և այնքան եր
նիհարել, վոր անկողնից չեր կարողանում
վեր կենալ: Կլինիկայի բժիշկները շատ ելին
հետամուտ յեղել իմանալու տենդի պատ-
ճառները, բայց այդ նրանց չեր հաջողվել:

Քիչ ժամանակից հետո հիվանդը գան-
գատվեց իր մի անամից: Նրան պատգարա-
կով ուղարկեցին իմ կլինիկան: Բերանը խը-
նամքով հետազոտելուց հետո յես գտա յեր-
կու հիվանդ ատամ, վոր և հանեցի: Սրանից
հետո նա սկսեց առողջանալ, չերմը շւտով
անցավ, հիվանդը կազդուրվեց ու մի ամսից՝
իր վոտքերով տուն վերադարձավ կլինի-
կայից:

Այսպիսի որինակներ շատ կան. դրանք
բոլորն ել ցույց են առաջիս, թե շատ հիվան-
դություններ կապ ունեն ատամի հիվանդու-
թյան հետ: Անհրաժեշտ ե, վոր այս բանն
իմանան բոլոր աշխատավորները: Յերբ գի-
տակ լինես այս կարևոր հանգամանքին,
յուրաքանչյուր բանվոր և կոլտնտեսական

հատուկ ուշադրություն կդարձնի ատամների
պահպանությանը և հարկավոր միջոցները
կդորձադրի՝ նրանց հիվանդությունը կան-
խելու համար: Իսկ թե ինչից են հիվանդա-
նում ատամները և ինչպես և հարկավոր
պահպանել նրանց, կարելի յե հասկանալ
միջյան այն ժամանակ, յերբ գիտես, թե ինչ-
պես են աճում ատամները, ինչպես են նրանք
կազմված և ինչպիսի կապ կա նրանց և
ծնունդների ու ամբողջ որգանիզմի միջև:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՃՈՒՄ ԱՏԱՄՆԵՐԸ

Մարդս յերկու անգամ ե ատամ հանում
առաջին անգամվա ատամները կոչվում են
կարնատամներ (մանկական), յերկրորդ ան-
գամվանը՝ մենայուն ատամներ:


Կաթնատամների թիվը յերկու ծնունդների
վրա լինում ե քսան հատ: Նրանք աճել են
սկսում մանկան գեռ արգանդային կյան-
քում: Նրանք աճում են ծնուտի ներսում, իսկ
բերանի մեջ յերևում են մանկան Յ ամսա-
կան հասակում: Այդ քսան ատամները մի
անգամից չեն դուրս գալիս, այլ աստիճա-
նաբար: Առաջ յերեկում են ներքելի կենտ-
րոնական կտրիչները, ապա վերեկի կենտ-

բոնական կտրիչները: Այս ատամները դուրս են գալիս մանիան 6—8 ամսական հասակում: Մինչև 12 ամսական հասակը դուրս են գալիս կողքի չորս կտրիչները, վորոնցից յերկուսը ներքեի և յերկուսն ել վերեի ծընոտի վրա: Հետեաբար, մինչև մեկ տարեկան լինելն առողջ մանուկին արգեն ունենում ե ութը ատամ: Մինչև 12—16 ամսական հասակը դուրս են գալիս սեղանատամներ՝ թվով չորս հատ. մինչև 16—22 ամսական հասակը դուրս են գալիս ժանիքները, իսկ 30 ամսական հասակում դուրս են գալիս վերջին սեղանատամները: Այսպես ուրեմն մինչև $2\frac{1}{2}$ տարեկան հասակին առողջ մանկան բերանում յերևում են բոլոր կաթնատամները:

Մանկան դուրս յեկած կաթնատամներն ամուր են լինում միայն այն ժամանակ, յերբ մայրը՝ իր հղության որերին՝ առողջությունը քայլալող հիվանդություն չի ունեցել և լավ ել մնվել ե: Հզի կնոջ սնունդը պիտք ե լինի բազմազան և մրգերով ու բանջարեղենով առատ: Նման սնունդը նպաստում է մանկան ատամների ամրակազմ լինելուն:

Յերեխայի ծնվելուց հետո մայրն իր ստիճառի պետք ե կերակրի նրան: Բժշկական

գիտությունը ցույց է տալիս, վոր իրենց մոր կաթով մնվող մանուկների ատամներն ավելի առողջ են լինում և քիչ են հիվանդանում:



Նկար 1. Հինգ տարեկան յերեխայի ներքեկի ծնուաը տասը հատ կաթնատամով. 1 և 2 — կտրիչները, 3 — ժանիքը, 4 և 5 — մեծ սեղանատամները, 6 և 7 — մայուն սեղանատամների արմատները:

Յերբ հզի կնոջ առողջությունը լավ ե, յերբ նա բազմազան սնունդ ունի ու ինքն և կերակրում յերեխային, կաթնատամները դիմացկուն են լինում և դուրս են գալիս

ժամանակին: Յեվ ընդհակառակը, յեթե հղի կինը յերկարատե հիվանդություններ ե ունեցել և վատ ե կերպակրվել, կաթնատամները դիմացկուն չեն լինում, իսկ յեթե յերեխային ծիծ չեն տալիս, կաթնատամները սովորաբար ուշ են դուրս գալիս և շատ դանդաղ:

Յուրաքանչյուր բանվորուհի և կողմանառուհի պետք ե իմանա, վոր յեթե յերեխայի առաջին առամները դուրս են գալիս ինն ամսական լինելուց հետո, գա նշանակում ե, վոր յերեխան առողջ չե, հետևաբար և պետք ե բժշկին ցույց տալ նրան:

Առամները դուրս գալուց մի քանի շաբաթ առաջ սկսում ե առատ թուք վազել յերեխայի բերանից, իսկ առամները դուրս գալուց մի յերկու որ առաջ յերեխան սկսում ե ձեռքի տակ ընկած ամեն բան բերանը տանել և մեծ յեռանդով կրծում ե լնդերքով իր ձեռքն ընկած տուարկաները: Շատերն այս յերեռոյթը նրանով են բացարում, վոր առամները դուրս գալուց առաջ յերեխայի լնդերքը չափազանց սաստիկ քոր են գալիս: Դրա համար շատ մայրեր իրենց յերեխայի համար վոսկրե ողակներ են գնում, տալիս են կրծելու մանուշակի արմատ, յերբեմն ել

բաժակակալի յեզրը և կամ ուրիշ, բոլորովին անհամապատասխան իրեր:

Յերեխան յերբեմն վիրավորում ե լնդերը, միկրոբները մտնում են վերքի մեջ, և լնդերն սկսում են ցավել: Կնդերի ցավերին յերեխան չի դիմանում ու սկսում ե լալ, կապրիզներ անել, գառնում ե դյուրագրգիռ և շատ անհանգստություն ե պատճառում: Յերեխային հանգստացնելու համար միքանի մայրեր ժամանակից առաջ ծիծ են տալիս նրան, վորով և խախտում են յերեխային կերակրելու կարգը: Սրան իբրև հետևանք՝ առաջանում ե ստամոքսի խանգարում, վորը մայրերի լեզվով կոչվում ե «ատամնային փորհարինք»:

Իսկ իրականում այդպիսի փորհարինքը վոչ թե ատամների դուրս գալու հետեվանք ե, այլ պարզապես արդյունք ե անկանոն կերակրման: «Ստամոքսային փորհարինք» ասվածն իրականում գույություն չունի: Չպետք ե մոռանալ այս, ինչպես նաև չպետք ե միիթարվել նրանով, վոր «հենց վոր ատամները դուրս գան, փորհարինքը կանցնի»: Սակայն այդ դատողությունն ուղիղ չե: Այս փորհարինքն ել ինչպես և ուրիշ անդամներինը, պետք ե անպատճառ բժշկել


ծամել սնունդը կարելի յե միայն առողջ
ատամներով:

Յեթե ատամները հիվանդ են, բերանը
լիքն ե լինում զարակար միկրոբներով, վո-
րոնք կերակրի հետ մտնում են ստամոքսը,
թունավորում են նրան և յերեխային ստա-
մոքսի խանգարում են պատճառում: Բացի
սրանից, փչացած կաթնատամների միջով
միկրոբները կարող են մտնել ծնոտի մեջ և
վոչչացնել մնայուն ատամների սաղմերը, վո-
րոնք նստած են կաթնատամների արմատների
տակ (Նկար 2): Այս դեպքում, կաթնատամ-
ների ընկնելուց հետո, յերեխայի մնայուն
ատամները չեն աճի:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿԱԶՄՎԱՇ ՄԱՐԴՈՒ ԱՏԱՄՆԵՐԸ

Կաթնատամների փոխարինումը մնայուն
ատամներով սկսում է յոթը տարեկան հա-
սակից և վերջանում է 13 տարեկան հասա-
կում: Մնայուն ատամների թիվը կաթնա-
տամներից շատ ե: Նրանք սովորաբար յե-
րեսուն յերկու հատ են լինում:


Սակայն իմաստության չորս ատամները
սովորաբար գուրս են գալիս ավելի ուշ



Նկար 3. Զավահաս մարդու բերանը և մնայուն և ատամները:

այսինքն՝ 18-ից մինչև 25 տարեկան հասակում, յերբեմն ել բոլորովին չեն դուրս գալիս նրանք:

Կանոնավոր դուրս յեկած առամերը գեղեցիկ շարք են կազմում բերանում: Բայց կան առամեր, վորոնք անկարգ ու անկանոն




Նկար 4. Անկանոն աճած առամերը. Նրանց վրա հակցված է շտկիչ ապարատը:

են դուրս գալիս: Նրանք կամ դուրս են ցըցքում առամեաշարքից և դեմ են առնում շրթունքներին, կամ ներս են ծովառմ գեպի լեզվի կողմը: Այսպիսի առամերը յերբեմն վերք են պատճառում շրթունքներին կամ լեզվին, ուստի լավ կլինի նման առամերը

շտկել մանուկ հասակից: Ներկայումս արդեն բժիշկներին հաջողվում է շտկել այդպիսի առամերը (նկար 4):


Առամբ կազմված է յերեք մասից՝ պսակ, արմաս, յեկանակիզ: Պսակն առամի այն մասն է, վոր բերանում յերկում է: Արմաս կոչվում է այն մասը, վոր նստած և ծնոտի մեջ: Առամեավիզն առամի այն մասն է, վոր յեզերված և լողերով:

 Ինչպես առամի պըսակն, այնպես ել նրա արմատը բաղկացած է կարծր և փափուկ մասերից: Առամի փափուկ մասը գտնվում է նրաներ-նակն կորպածքը: 1—եսում, 2—վորկը և միջի խողովակիները, 3—առամի միջուկը և այրու-նասար անոթները:

 Նկար 5. Առամի յերկայ նակն կորպածքը: 1—եսում, վորտեղից անցում էն առամի նյարդերը և առամի միջուկը և այրու-նասար անոթները:

Վորոնց միջոցով և կատարվում է առամի մննգառումը: Առամն ավելի կարծր է ու զիմացկուն, քան վոսկորը: Դիմացկուն է մանավանդ նրա պսակը, վորն ամբողջապես պատած է

փայլուն եմալով; Եմալի տակ, ատամի կարծր մասում կան բաղմաթիվ նեղլիկ անցքեր, վորոնք գնում են եմալից դեպի ատամի միջուկը:



Նկար 6. Զարգահաս մարդու ներքեւի ծնողաք. ատամները հանգած են և յերկում են միայն ատամների փոսիկները:

Յյուրաքանչյուր ատամ իր արմատով ամրացած ե ծնոտի փոսիկների մեջ հատուկ հողակապով, վորը հնարավորություն ե ատամիս ատամին միջիչ շարժվել, բայց միևնույն ժամանակ պինդ ել պահում ե նրան ծնոտի

մեջ: Վարքան ավելի կոշտ լինի մարդու կերակուրն, այնքան դիմացկուն կլինիկն հոգակապերը և նույնքան ամուր նստած կլինիկն ատամները ծնոտի մեջ:

ԻՆՉՈՒ ՅԵՆ ՓՉԱՆՈՒՄ ԱՏԱՄՆԵՐԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՄԱԳԱՌԵԼ ԴՐԱ ԴԵՄ

Ատամների ամենատարավագած և ամենամանր հիվանդությունը կարինեսն ե, այսինքն ատամի փոսկրափումը (իուշակ):

Ատամի փոսկրափտում կարող են ունենալ նույնիսկ յերկու տարեկան յերեխաները: Ճիշտ ե, ուս հազվագյուտ յերեսույթ ե, բայց յերեք տարեկան հասակի յերեխաները հաճախ են հիվանդանում կարիեսով (փոսկրափտում): Մեր հետազոտություններից յերեսում ե, վոր այս հասակի հարյուր յերեխաներից 16-ն արդեն ունեն հիվանդ ատամներ:

Զորս տարեկան հասակի հարյուր յերեխաներից 54-ն ունեն հիվանդ ատամներ, 5—6 տարեկաններից՝ 78 հոգին և 7—8 տարեկաններից՝ մինչև 80 հոգի: Շատ վատ ատամների տեր են դպրոցական յերեխաները, իսկ ավելի վատ—չափահամները: Հաղիկ թե գտնվի հասակավոր մի մարդ, վորի մեկ կամ

միքանի ատամները կարիես հիվանդությունը
չունենա:

Ատամների վոսկրափում առաջացնող-
ները միկրոբներն են, վորոնք բազմաթիվ
քանակությամբ լցված են մեր բերանում:
Յեթե միկրոբների կյանքի համար բերանի
պայմանները բարենպաստ են, ապա նրանք
յեռանդուն կերպով սկսում են իրենց ավե-
րիչ գործը և դրանով բայցայում են ատամ-
ները:

Նրանց զարգացման անհրաժեշտ պայման-
ներն են՝ սննդի առատությունը, թացու-
թյունը և գոլ ջերմաստիճանը: Թացությունը
և համապատասխան ջերմաստիճան բերանում
միշտ կա, իսկ սննդի մնացորդներն առատ
են լինում այն դեպքում, յերբ մարդիկ չեն
խնամում իրենց բերանը, չեն վողողում և
չեն մաքրում այն:

Միկրոբներն սկսում են քայքայել բերանի
մեջ մնացած սննդեղենի մնացորդները,
վորից գոյանում են այնպիսի թթուներ, վո-
րոնք լուծում-փշացնում են ատամի նևալը:
Իսկ յերբ եմալը քայքայվի, միկրոբները
թափանցում են անցքերը, սկսում են շարու-
նակել իրենց ավերածությունը և ատամի
մեջ բացվում ե փչակ:

Ատամի կարիեսով վարակված տեղը մութ
գույն և ստանում և կակզանում ե: Ատամի
փչակը միշտ լիքն է կերակրի մնացորդներով
և միկրոբներով: Կերակուրն այնտեղ փառում
է, վորի հետեանքով բերանից վատ հոտ և
դալիս: Ատամը դառնում է զգայուն՝ սառը,
տաք, թթու և աղի ուտելեղենի և ըմպելիքի
հանդեպ: Հետեւլաբար և ամեն անգամ ու-
տելիս և խմելիս հիվանդն ատամի ցավ և
զգում:

Յեթե հիվանդը բժիշկին դիմե հիվանդու-
թյան հենց սկզբին, բժիշկը կառողջացնե հի-
վանդ ատամը ու միանգամից պլոմբ կղնի,
կղցնի ատամը: Այս դեպքում բժշկության
համար թե ինքն՝ աշխատավորը և թե ատամ-
նաբույժը շատ քիչ ժամանակ և աշխատանք
կգործադրեն:

Բայց հաճախ այնպես է պատահում, վոր
հիվանդը ժամանակին չի դիմում բժշկին և
անխնամ և թողնում իր հիվանդությունը:
Միկրոբներն ել ատամի անցքերով հասնում
են նրա վափուկ մասին, և մարդ հիվանդա-
նում ե: Անա այդ ժամանակ ե, վոր առաջ
և գալիս ատամի սոսկալի ցավերը, վորոնք
գիշեր-ցերեկ հանգիստ չեն տալիս աշխատա-
վորին, հարկադրում են նրան թողնել աշ-


Խատանքը, վազել բժշկի մոտ՝ ցավին սփոփանք անելու համար:

Բայց այժմ արդեն միանգամից չես բժշկի ատամը: Հիվանդը քանի քանի անգամ պիտի այցելի բժշկին, վատնելով թէ իր և թէ բժշկի աշխատանքային ժամերը: Նման գեղքում ատամը կարող է բժշկվել միայն այն ժամանակ, յեթե հիվանդը նետապահուեն այցելե առավելաբույժին նրա նշանակած որերին:

Ատամնաբուժի մոտ ճշտապահորեն չհաճախելու դեպքում հիվանդությունը յերկարում է, մնում է անխնամ և կարող է փոխվել ուրիշ հիվանդության, վորը ֆլյուս և կոչքում (այտերի և լողերի ուռեցք):

Ֆլյուսի ժամանակ ուռչում է ծնոտը և այտը, արյունակալվում է աչքը, դողացնում է, իսկ ցավերն այն աստիճան սաստկանում են, վոր հիվանդը գժի նման պատեպատ և ընկնում: Նրա խելքն ու միտքն իր ցավերի հետ են, նա վոչ մի աշխատանք չի կարող կատարել, վորովհետև աշխատած ժամանակ ցավերն ավելի յեն սաստկանում: Նա սոված է մնում, վորովհետև ցավերից անկարող և բերանը շարժել: Նա ուժասպառ ե լինում, վորովհետև չի կարող քնել: Մի փոքր ես, նա

դառնում ե կատարելապես հիվանդ, ամեն բանից զզված, ու մտածում ե միայն մի բանի մասին, այսինքն՝ ցավերից ազատվելու մասին:



Նկար 7. Ֆլյուսով հիվանդի գեմքը

Ֆլյուսն ամեն անգամ բարեհաջող վերջ ունենում: Ֆլյուսի ժամանակ յերբեմն ծնողակ վուկորը մեռուկ է գանում (օմերտահետ), մի շարք ատամներ թափվում են: յեր-

բեմն ել արյան վարակման հետևանքով հի-
վանդը նույնիսկ մեռնում եւ:

Անա ինչ հետևանքներ եւ ունենում ատամի
վոսկրափտումը, յերբ ժամանակին չեն
բժշկում նրան: Բոլոր աշխատավորներն ել
պետք ե իմանան այս, պետք ե իմանմքով
պահպանեն և ժամանակին բուժեն իրենց
ատամները:

Յերբեմն ատամները ծածկվում են կե-
րակրի մածուցիկ մնացորդներով, յերբեմն ել
նրանց վրա գոյանում են ատամի քարեր:
Նման ատամներն ավելի հեշտությամբ կա-
րող են կարիեսով հիվանդանալ:

Ատամի վրայի մածուցիկ շերտն այն
փառն ե, վորով մշտափես ծածկված են չմա-
քրոզ ատամները. այդ փառը սպիտակ գույն
ունի. կակուղ և մածուցիկ ե, ունի փատ
հոտ և բաղկացած ե կերակրի մնացորդներից
և փոշու մասնիկներից:

Այդ փառը հեշտությամբ սրբվում ե
ատամների վրայից կամ բարբակի կտորով
կամ ատամավճինով: Յեթե այդ փառը
չսրբվի, նրա մեջ գտնված միկրոբները տար-
բալուծում են կերակրի մնացորդները և գո-
յանում են թթուներ, վորոնք փչացնում են
եմալը: Ապա միկրոբները թափանցում են ա-

տամի անցքերը, վորից հետո սկսում ե ա-
տամների վոսկրափտումը:

Ատամի բարը նույնպես կազմված ե կե-
րակրի մնացորդներից և փոշու մասնիկնե-
րից՝ ավելացրած նաև կրային աղեր, վորոնք
գոյանում են թքից և նստում են ատամնե-
րի վրա: Ատամի քարը չափազանց կարծր ե-
նրան հեռացնել հնարավոր ե միայն մետաղյա-
ռուր գործիքներով: Նա սկսում ե նստել
ներքև ատամների վրա լեզվի կողմից, իսկ
վերևի ատամների վրա—այտերի կողմից: Այ-
նուհետև կամաց-կամաց պատում ե բոլոր ա-
տամները: Միկրոբները տարբալուծում են
կերակրի մնացորդները ատամի քարում, գո-
յացնում են թթուներ: Իսկ թթուները փչա-
ցնում են եմալը, վորի հետևանքով և առա-
ջանում ե ատամի վոսկրափտում:

Բացի դրանից, ատամի քարը շատ վնա-
սակար և լնդերքի համար: Սըանք ուռչում
են, կարմրում ու սկսում են թարախակալեր: Ապա լնդերքի հիվանդությունն անցնում ե
ծնոտի վոսկրիներին, ուր նստած են ատամ-
ները: Այս վոսկրիներն սկսում են փտել և
հրվանդանում են ատամաբնային կամ բըլ-
թակային կոչվող հիվանդությամբ (ալեւեօ-
լյառհայ ուորքյ): Այս հիվանդությունը ներ-

կայում շատ ե տարածված 30—45 տարեկան մարդկանց միջև։ Այս հիվանդության ժամանակ ասամի փոսիկներն սկսում են լրզվել ու տափականալ, ատամի արմատներն այդ պատճառով մերկանում են, չեն կարողանում խորը նստել փոսիկներում, տեղից խախտվում են և դա կարող ե վերջանալ նրանով, զոր բոլոր ատամներն ել թափվեն։ Հեղվորում թափվում են վոչ միայն հիվանդ, այլև բոլորովին առողջ ատամները։

Հետևաբար, ատամներդ փոսկրափտումից և թափվելուց զերծ պահելու համար, չպեսք ե բռվլ տաս, վոր ատամներիդ վրա փափուկ շերսեր յեվ բարեր գոյանան։ Իսկ զրա համար պետք ե կանոնավոր կերպով խնամես ատամներդ, մաքրես նրանց։

ԻՆՉՊԵՍ ԽՆԱՄԵԼ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՏԱՄՆԵՐԸ

Ատամները պետք ե խնամեն և՛ հասակավոր մարդիկ, և՛ մանուկները։ Մանուկներին պետք ե վարժեցնել իրենց ատամները խնամելու այն ժամանակից սկսած, յերբ յեկած կլինեն նրանց բոլոր կաթնատամները, այսինքն՝ 2^{1/2}—3 տարեկան հասակից։

Յերեխայի համար գնեցեք ատամնավըրձին և ցույց տվեք՝ ինչպես ե հարկավոր ատամները մաքրել։ Ատամնավըրձինը պետք ե փոքր լինի և փափուկ, վորպեսզի չճանկաւ յերեխայի նրբին լուրջը։ Ատամնավըրձինի խոզանների փնջիկները պետք ե միայն յերկեարդ շարված լինեն։ Ատամները մաքրելուց առաջ ատամնավըրձինը յեռացնում են՝ պատահաբար նրա վրա ընկած միկրոբներին վոչչացնելու համար։

Առաջին ժամանակները յերեխան ատամները մաքրում ե թաց ատամնավըրձինով, առանց ատամնափոշու։ Յերեք տարեկան յերեխան դեռ չի կարող զեկավարել իր չնչառությունն ատամները մաքրելու ժամանակ և կարող ե պատահել, վոր ատամնափոշու փոքրիկ մասնիկներն ընկնեն շնչուղին։ Դա կառաջացնի սաստիկ հաղ և կարող ե սառեցնել յերեխային ատամներն անխախտ մաքրելու սովորությունից։ Դրա համար ե, վոր առաջին անգամ յերեխային պետք ե սովորեցնել միայն թաց վրձինով մաքրել ատամները։

Ատամնավըրձինը պետք ե դնել լուրջերի վրա ու այսեղից տանել ներեմվ, մինչեվ ատամների յեզրը։ Այսպես վերեկից ներքեւ շարժե-

լով՝ ատամնավրձինը կմաքրի-կսրբի եմալի վրայի կակուղ փառը, զրա հետ միասին նաև այն բոլորն, ինչ փոք ատամների արանքումն ե կիտագած։ Ատամներին տրամուկի (ոռոքեք) չպետք ե շարժել ատամնավրձինը, ապա թե վոչ կերակրի մնացորդները կխրվեն ատամներում։ Ատամնավրձինը կարելի չե շարժել նաև ատամների յեղբեց դեպի լնդերը, վորովհետև կերակրի մնացորդները կարող են մտնել լնդերի և ատամների արանքը, գրգուել լնդերը, ուռեցք և բորբոքում առաջ բերել։

Յերեխան ատամները պիտի մաքրե քննելուց առաջ և առավոտը՝ վեր կենալիս։ Յեթե յերեխան զժվարանում ե որը յերկու անգամ ատամները մաքրել, այն ժամանակ պիտք ե անպատճառ մաքրե գիշերը, պառկելուց առաջ։ Յերեկները նա մի քանի անգամ ուռում ե, անդադար խոսում ե, հետևաբար առատ թուք ե արտադրում, վորը սրբում ե ատամների վրա յեղած կերակրի մնացորդները։ Իսկ միշև յերեկո նրա ատամների վըա, ինչպես և լնդերքի յեղբերին ու ատամների արանքում հավաքվում են կերակրի մնացորդներ։ Ահա զրամնք անհրաժեշտ ե մաքրել։ Իսկ գիշերը յերեխան բան չի ուռում, հետևաբար և կերակրի մնացորդներ չեն կարող

կուտակվել։ Վնաս չունի ուրեմն, յեթե յերեխան սռավոտները ատամները չմաքրի։

Դրա հետ միաժամանակ յերեխային պետք ե սովորեցնել, թե ինչպես պահպանել իր ատամնավրձինը։ Ատամը մաքրելուց հետո պետք ե ինսամքով լվանալ ատամնավրձինը յեփած ջրով, ապա փաթաթի սպիտակ, մաքուր լաթով, վորպեսզի վրան փոշի չնստի։ Ամեն անգամ ատամները մաքրելուց առաջ ատամնավրձինը հարկավոր ե յեռացրած ջրով լվանալ։

Ատամները մաքրել սովորելուց հետո, յերեխան պետք ե նաև բերանը վողողել սովորի։ Բերանը վողողում են սենյակի ջերմաստիճան ունեցող յեռացրած ջրով։ Պետք ե բերանն առնել մեկ ումպ ջուր, պինդ սեղմել ատամները և վողողել. այսպես անելով մաքրվում են ատամների արանքները։

Յերբ յերեխան արդեն սովորած կլինի ատամները մաքրելու ժամանակ դեկավարել իր չնշառությունը (իսկ զա կարող ե լինել միայն 5—6 տարեկան հասակում), նրան կարելի յե սովորեցնել նաև ատամնափոշիյով մաքրել ատամները։ Անհրաժեշտ ե սակայն իմանալ, վոր ատամնափոշին միայն հղկում ե ատամները, փայլ ե տալիս նրան, իսկ կե-

Ռակրի մնացորդները մաքրելու նկատմամբ
վոչ մի գեր չի խաղում:

Չափազանց հաճախ ատամնափոշիյով մաք-
րելն ել վատ ե ներգործում ատամի եմալի
և լողերքի վրա: Դրանից եմալը փչանում ե,
իսկ լողերքը գրգռում: Հետևաբար ատամ-
նափոշին ամեն որ չպետք ե գործադրվի:
Միանգամայն բավական ե, յեթե յերեխան
հնգորյակում մեկ անգամ հղկի ատամները
ատամնափոշիյով:

Ատամ մաքրելու լավագույն ատամնա-
փոշին լավ ծեծած, խնամքով մաղած կավլինն
ե: Նա անախորժ հոտ չունի, և յերեխաները
հեշտությամբ են ընտելամում նրան:

Ատամի քարը յերեխաների մոտ սովո-
րաբար առաջանում ե շատ ուշ՝ 7—8 տարե-
կան հասակում: Ատամի քարն առաջանա-
լուն պես յերեխային պետք ե բժշկի մոտ
տանել՝ քարը հանելու համար: Յեթե բժշ-
կական ոգնությունն ուշանա, լողերքի հի-
վանդությունը կակսվի:

ԽՆՉՊԵՍ ԽՆԱՄԵԼ ՄԵԾԵՐԻ ԱՏԱՄՆԵՐԸ

Մեծերի ատամները պետք ե խնամվեն
այսպես, ինչպես և մանուկներինը: Միայն

այլ տեսակ ատամնավրձին ե հարկավոր ընտ-
րել: Նախ և առաջ պետք ե, վոր ատամնա-
վրձինը կոչ խոզանից լինի շինված: Մե-
ծերի լողերքը կոշտ են, հետևաբար վախե-
նալ պետք չե, վոր կոշտ վրձինը կարող ե
նրանց գրգռել: Խոզանի վիճիկները դասա-
վորված պետք ե լինեն միմյանցից բավա-
կանաշափ հեռու: Ատամնավրձինի կոթը
պետք ե վոսկրից շինված լինի:

Մեծերն ել ատամները պետք ե սրբեն
նույնակես լիդերից դեպի ատամների լիգր՝
թէ շրթունքի և թէ լեզվի կողմից: Բացի
դրանից, անհրաժեշտ ե ջրով լավ վողողել
նաև բերանը: Ատամնավրձինով չմաքրվածը
հստակ կմաքրվի վողողման միջոցով: Ան-
հրաժեշտ չե ամեն որ ատամնափոշիյով մաք-
րելը: Միանգամայն բավական ե, յեթե յե-
րեք որը մի անգամ կավիճով հղկվեն ատամ-
ները:

Ատամի պատահներ յեզ ելեխայրներ գոր-
ծածեն ավելորդ ե: Ատամի պատահ ջրի
մեջ լավ չի լուծվում և խցիւմ ե ատամի
արանքներում, ապա սրանց վրա նստում են
կերակրի մնացորդները և միկրոբները: Ատա-
մի ելեխայրները հաճախ գրգռում են լըն-
դերքը և բերանի լորձաթաղանթը, դրա հա-

մար ելնրանք ատամ մաքրելու համար, հանձնարարելի չեն:

Մեծերը պետք ե որինակ լինեն փոքրներին, թե ինչպես ե պետք ատամները խընամել: Որինակը վարակիչ է, իսկ մանուկները շատ են սիրում ընդորինակել. մեծերին:

Առողջ ատամներ ունենալու համար հարկավոր ե վոչ միայն վրձինով մաքրել նըրբանց և վողողել ջրով, այլ և ամրացնել՝ աշխատանքով բեռնավորելով նըրանց: Հայտնի յե, վոր լավ սնվում ե և առողջ ե լինում այն գործարանը, վորն ավելի յե աշխատում: Մարդ կա, վորի աջ ձեռքն ե ավելի ուժեղ, վորովհետև գլխավորապես այդ ձեռքով ե աշխատում նա. մարդ ել կա, վորի ձախ ձեռքն ե ուժեղ, վորովհետև նա աշխատելիս ավելի ձախ ձեռքն ե ոգտագործում: Այսպես ել ատամները: Ով ուտում ե միայն խիստ շատ յեփած և մանրած-տրորած սնունդ, խուսափում ե չոր հաց ուտելուց, ուտում ե միայն հացի միջուկը, իսկ չորուկին ձեռք չի տալիս, նրա ատամները թույլ են լինում և լողերը հեշտությամբ յենթարկվում են հիվանդության: Նրանց ատամները ծնոտի փոսիկում լավ չեն նստած, հետեւաբար և

ավելի հեշտությամբ են յենթարկվում կարփես (վոսկրափտում) հիվանդության: Իսկ կոշտ ուտելիքներ գերազասող մարդկանց ատամներն ամսւը նստած են ծնոտի փոսիկներում, և նրանց լողերն ել ավելի զիմացկուն են: Այսպիսի լողերը սակավ են հիվանդանում, և ատամները յերկար ժամանակ չեն թափվում:

Դրա համար պետք ե մանուկներին կոշտ ուտելիքի ընտելացնել: Պաքսիմաներ տվեք ուտելու, համառորեն պահանջեցնեք, վոր հացի չորուկն ել ուտեն: Ճաշից հետո, ինչպես նաև որփա ընթացքում, շատ լավ կանեք, յեթե յերեխաներին կոշտ խնձոր, գազար, շաղգամ և այն տաք ուտելու. այս ամենը նպաստում են լողերի և ատամների ամրացմանը:

Մրգերն ու բանջարները վոչ միայն աշխատանք են տալիս ատամներին, այլ շատ լավ մաքրում են շողիքները: Բացի դրանից, մրգերն ու բանջարեղեններն իրենց մեջ պարունակում են բազմաթիվ այնպիսի նյութեր, վորոնք շատ ոգտակար են ատամների համար:

Կոշտ ուտելիքը շատ ոգտակար ե նաև մեծահասակների համար:

Ով կոշտ սննդեղեն ե ուսում, նա ա՛վելի
սակագ ե հիվանդանում լողերի և ատամի
ցափերով:

Ահա այս յեղանակով կարելի յե կանխել
ատամի քարի, ատամի վոսկրափումի և
ծնոտի փոսիկների հիվանդությունը: Իսկ
յեթե վոսկրափումն արդեն սկսել ե, չպետք
է անուշագիր թողնել նրան, այլ շուտա-
փույթ բժշկել սկսել:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԲԺՇԿՈՒՄ ԱՏԱՄՆԵՐԸ

Յարական կառավարությունը մատը մա-
տին չեր խփում՝ աշխատավորներին ատամ-
նաբուժական ձրի ողնություն ցույց տալու
համար: Վո՞չ քաղաքներում և վո՞չ ել գյու-
ղերում չկային ատամնաբուժական ձրի ամ-
բուլատորիաներ: Ամենքն ել պետք ե բժշկ-
վելին մասնավոր ատամնաբուժերի մոտ,
ինարկե փողով: Իսկ դա բնավ մատչելի չեր
աշխատավորներին:

Ներկայումս առողջապահության ժողո-
վրդական կոմիսարիատը ամեն տեղ շինում
է ատամնաբուժարաններ, ուր աշխատա-
վորները ձրիապես ողնություն են ստա-
նում:

Կարիքեալ հաճախ պատճառ ե լինում
առողջությունը խախտելու, աշխատերը կոր-
ցնելու և նույնիսկ յերբմն ել մահով ե վեր-
ջանում: Առժողկոմատը հաշվի յե առնում
այս հանգամանքը և որեց որ բազմացնում
ե աշխատավորների համար բացված ձրի
ատամնաբուժական կարինետների և ամբու-
լատորիաների թիվը:

Ինչ վերաբերում ե դպրոցական հասակի
յերեխաններին, ներանց բերանի առողջացումը
տարվում ե սլանային կարգով: Դա կա-
տարվում ե այսպես.

Ատամնաբույժն առաջ հետազոտում է
առաջին խմբի դպրոցականներին: Հիվանդ
ատամ ունեցող ողակերտները հերթով ըն-
դունվում են ատամնաբուժի մոտ, վորը
բժշկում ե այն բոլոր ատամները, վորոնց
դեռ կարելի յե բժշկել, և հանում ե այն
ատամները, վորոնց այլես չի կարելի բժշ-
կել: Նա հեռացնում է ատամի բարերը,
բժշկում ե լողերը և սովորեցնում ե, թե
ինչպես պետք ե խնամել ատամները:

Առաջին խմբի աշակերտների ատամներն
այսպես բուժելուց հետո, բժիկն անցնում է
յերկրորդ խմբի աշակերտներին, ապա յեր-
երրդ և չորրորդ խմբերին: Հաջորդ տարին

բժիշկն սկսում ե ատամների բուժումն այն աշակերտների, վորոնք նոր են մտել առաջին խումբը. ապա վերաստուգում ե այն յերեխաների ատամները, վորոնց անցյալ տարի յենայել: Յեթե նրանք նոր են հիվանդացել կարիեսով, բժիշկը բուժում ե այն: Պարզ ե, վոր այս յերեխաների միջև ատամների վոսկրափումը շատ աննշան թվով ե լինում: Բացի զրանից այս վոսկրափումը դեռ հնացած չլինելով, կարճ ժամանակում ել բուժում ե:

Յերեխաների բերանի այսպիսի պլանացին առողջացումն ահազին ոգուտ ե բերում. առաջինը՝ յերեխան ավելի քիչ ե հիվանդանում վարակիչ հիվանդություններով. յերկրորդը՝ նա դասեր չի բաց թողնում ատամները ցավելու պատճառով, հետևաբար և պարապմունքներից յետ չի մնում. յերրորդը այս պայմաններում յերեխաների ատամները միշտ առողջ են լինում, ուստի և ատամների պատճառով այս կամ այն հիվանդությունն ստանալու վտանգից զերծ են լինում նրանք, դասերից յերկար ժամանակով յետ չեն մնում և առողջությունը չեն վտանգում: Առողջ ատամ ունեցող յերեխաներն ավելի լավ են յուրաքնում սնունդը.

Նրանք ամբակազմ են լինում, կայտառ և ուժեղ: Ահա ինչ արդյունք ե ունենում դպրոցական յերեխաների բերանի պլանացին առողջացումը:

Բայց առայժմ գեռ բոլոր քաղաքներում և կոլտնտեսություններում չեն սկսել գպրոցական հասակի յերեխաների բերանի առողջացումը:

Կուլտուրական և առողջ կյանքի համար հայտարարված արշագում, վորը քաղեաժինների ղեկավարությամբ լայնորեն ծավալվել ե մեր յերկրամասում, կոլտնտեսությունները պետք ե ձգտեն և համեն այն բանին, վորպեսզի կոլտնտեսային հասարակայնությունը ձեռնարկի գպրոցական յերեխաների բերանի պլանային առողջացումն իրագործելու: Ամենուրեք պետք ե կենսագործել այս ոգտագիտ գործը և զրանով ել ավելի կազդուրել սոցիալիզմ կառուցողների նոր հերթափոխի առողջությունը:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչո՞ւ մարդիկ չեն պահպանում իրենց ատամները	
Փշացված ատամները շատ վտանգավոր են առողջու-	
թյան համար	7
Ատամիք և մյուս հիվանդությունների միջև յեզած կապը .	13
Ինչպես են աճում ատամները	21
Ինչպես են կազմված մարդու ատամները	28
Ինչու յեն փշանում ատամները և ինչպես մաքառել	
զբա գեմ	23
Ինչպես խնամել մանուկների ատամները	40
Ինչպես խնամել մհծերի ատամները	44
Ինչպես են բժշկում ատամները	48

ՀՀ Ազգային գրադարան



NL0267627

ԳԻՆԸ
Цена 30 ԿՈՊ.
Կոպ,

6716

На армянском языке

Профессор Н. И. Агалов

БЕРЕГИ ЗУБЫ

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО

ԴՐԱ.ՊԱՀԱՅԵՍՑ

ՈՊԱՏՈՎ-ԴՊՆ ՄՈՍԿՎԻԿԱՑ ՓՈՂ. № 58-

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ԿԵԴՐՈՎԵՆՑՐ)